


31 դեկտեմբերի, 2016թ.

AMERIABANK

# ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Available on the iPhone App Store

EUROMONEY 2016
2011, 2012, 2014, 2016

2011, 2012, 2013, 2014, 2015, 2016

The Banker
2010, 2013, 2015, 2016

# Պատասխանատվության սահմանափակում

Սույն շնորհանդեսում պարունակվող տեղեկությունները չեն անցել անկախ ստուգում, և դրանց, ինչպես նաև սույն շնորհանդեսում արտահայտված կարծիքների ճշգրտության, ամբողջականության և անկողմնակալության վերաբերյալ չկա որևէ հավաստում: Ամերիաբանկը և դրա խորհրդատուները, ներկայացուցիչները, ինչպես նաև բանկի հետ փոխկապակցված անձինք որևէ պատասխանատվություն (անփութության կամ այլ հիմքով) չեն կրում սույն փաստաթղթի կամ դրանում պարունակվող տեղեկությունների օգտագործման հետևանքով որևէ անձի կրած վնասի համար: Սույն փաստաթուղթը չի հանդիսանում առաջարկ, և ոչ այն, ոչ դրա որևէ մաս չի կարող հիմք համարվել որևէ պայմանագիր, համաձայնագիր կամ գործարք կնքելու համար:

Սույն շնորհանդեսը կարող է պարունակել այսպես կոչված ,հեռանկարայինե պնդումներ, որոնք փաստ չեն հանդիսանում, այլ արտահայտում են մեր սպասումներն ու ակնկալիքները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները: Նշված հեռանկարային պնդումները հիմնվում են Ամերիաբանկի ղեկավարությանը հասանելի ընթացիկ ծրագրերի, գնահատականների և կանխատեսումների վրա և հետևաբար արդիական են միայն դրանց հրապարակման պահին: Մենք չենք պարտավորվում վերանայել դրանք քաղաքականության փոփոխության կամ նոր իրադարձությունների/փաստերի ի հայտ գալու դեպքում: Իրենց բնույթով հեռանկարային դրույթները պարունակում են ռիսկեր և անորոշություններ, որոնց պատճառով ակնկալվող արդյունքները կարող են էապես տարբերվել փաստացի արդյունքներից:




Սույն փաստաթուղթը կարող է տրամադրվել ըստ պահանջի կամ բեռնվել www.ameriabank.am կայքից:

## «Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

Հաշվեկշիռ

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# «Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Մասնագիտական խորհրդատվական և բանկային ծառայություններ, փորձառու և իրենց գործին նվիրված մասնագետներ

AMERIAGROUP

**AMERIA**

**ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ, ՀԱՐԿԱՅԻՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ**

Առաջատարը Հայաստանի մասնագիտական խորհրդատվական ծառայությունների շուկայում (1998 թ-ից)

**AMERIABANK**

**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ, ՄԱՆՐԱԾԱԽ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ունիվերսալ բանկ, որը մատուցում է կորպորատիվ, մանրածախ և ներդրումային բանկային ծառայություններ (հիմնադրվել է 1910թ. որպես Կովկասյան առևտրային բանկի մասնաճյուղ)

**PRODECO** PROPERTY DEVELOPMENT COMPANY

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

Անշարժ գույքի պարգացման և կառավարման ծառայություններ (2010թ-ից)

## ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

### ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ՝

1. Մեր հաճախորդներին տրամադրելով **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ** ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ
2. Իրականացնելով հասարակության **ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆԸ** ուղղված նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր
3. Ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության պարգացման մոդել՝ միավորելով **ՀԱՋՈՂԱԿ ՄԱՐԴԿԱՆՑ**
4. Շարունակաբար **ԱՎԵԼԱՑՆԵԼՈՎ** մեր **ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

## ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

1. Հաճախորդակենտրոն մոտեցում և սպասարկման բարձր որակ
2. Հաճախորդների վստահություն և գոհունակություն
3. Գործարար էթիկայի սկզբունքներ և տեղեկատվական թափանցիկություն
4. Բարձր պրոֆեսիոնալիզմ և թիմային աշխատանքի սկզբունքներ



## ԱՆԴՐԵՅ ՄԿՐՏՉՅԱՆ

Տնօրենների խորհրդի նախագահ (,Ամերիաե ընկերությունների խմբի գործադիր տնօրեն)

Ունի ներդրումային և կառավարման ոլորտներում խորհրդատվության ավելի քան 20 տարվա փորձ, Հայաստանում ներդրումաբանկային ոլորտի հիմնադիրներից է, մի շարք մասնավոր և պետական կազմակերպությունների խորհրդի անդամ:



## ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տնօրենների խորհրդի անդամ (,Հայաստանի զարգացման նախաձեռնություններե (IDEA) հիմնադրամի խորհրդի նախագահ)

Հայտնի ներդրումային բանկիր՝ ավելի քան 25 տարվա աշխատանքային փորձով, առանցքային դեր է խաղացել Ռուսաստանի կապիտալի շուկաների կայացման գործում, Մոսկվայի ,Սկոլկովոե կառավարման դպրոցի հիմնադիր գործընկեր է, Ռուսաստանի և այլ երկրների մի շարք կազմակերպությունների խորհրդի անդամ, Միջազգային ֆինանսական կորպորացիայի Տնտեսական խորհրդատվական խորհրդի անդամ:



## ՆՈՒԲԱՐ ԱՖԵՅԱՆ

Գիտությունների դոկտոր (PhD), Տնօրենների խորհրդի անդամ (գլխավոր գործընկեր/գործադիր տնօրեն, Ֆլեգշիփ Վենչըրս)

Ունի վենչուրային կապիտալի կառավարման (մասնակցել է կենսաբանական/բարձր տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող ավելի քան 24 ընկերությունների հիմնադրմանը) և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում դասավանդման գրեթե 30 տարվա փորձ, մի շարք պետական և մասնավոր կազմակերպությունների խորհրդի կազմում է:



### ՌՈԲԵՐՏ ՖՈՆ ՌԵԿՈՎՍԿԻ

Տնօրենների խորհրդի անկախ անդամ (փոխնախագահ, վարգացող շուկաների ռազմավարության բաժին, Ֆիդելիթի Ինվեսթմընթս)

Ունի աշխարհով մեկ ակտիվների և պորտֆելների կառավարման գրեթե 30 տարվա փորձ, հանդիսանում է մի շարք պետական և մասնավոր կազմակերպությունների խորհրդի անդամ:



### ՕԼԵԳ ՑԱՐԿՈՎ

Տնօրենների խորհրդի անդամ (գործադիր տնօրեն, Ֆենիքս էդվայկըրս)

Ավելի քան 20 տարվա փորձ ներդրումաբանկային և խորհրդատվական ծառայությունների ոլորտում, ,Սվարոգ Քեփիթըլ էդվայկըրսե ընկերության հիմնադիր և ղեկավար գործընկեր, նախկինում ,Տրոյկա Դիալոգե ընկերության ներդրումաբանկային գործառնությունների վարչության ղեկավար



### ԱԼԵՔՍԵՅ ԳԵՐՄԱՆՈՎԻՉ

Տնօրենների խորհրդի անդամ (պրոֆեսիոնալ անկախ տնօրեն)

Ռուսաստանում կորպորատիվ հաղորդակցման և ներդրողների հետ փոխհարաբերությունների ոլորտում ամենակարկառուն մասնագետներից մեկը: 15 տարի է, ինչ աշխատում է տնտեսության տարբեր ոլորտներ ներկայացնող ռուսական խոշոր ընկերություններում որպես տնօրենների խորհրդի և գործադիր մարմինների անդամ:



### ՊԻԵՌ ԳՅՈՒՐՋՅԱՆ

Տնօրենների խորհրդի անդամ (Բյուսելի ազատ համալսարանի տնօրենների խորհրդի նախագահ)

27 տարվա փորձ խորհրդատվական ծառայությունների ոլորտում, աշխատել է ,ՄըՔինսի ընդ Քամփնիե ընկերությունում՝ որպես ավագ գործընկեր, եղել է ընկերության բելգիական-լյուքսեմբուրգյան գրասենյակի ղեկավար գործընկերը, հանդիսանում է մի շարք համալսարանների ու միջազգային կազմակերպությունների խորհրդի անդամ:

# Մեր գործընկերները և տնօրենները

## Երբ անուններն ամեն ինչ ասում են ...



### ԱՐՏԱԿ ՀԱՆԵՍՅԱՆ

Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն, Ամերիաբանկ

Փորձառու բանկիր՝ Հայաստանի առևտրային բանկերում ավելի քան 22 տարվա փորձով



### ԳԵՎՈՐԳ ԹԱՌՈՒՄՅԱՆ

Գլխավոր ֆինանսական տնօրեն, գլխավոր տնօրենի տեղակալ, Ամերիաբանկ

Ավելի քան 20 տարվա փորձ ֆինանսական կառավարման ոլորտում, 13 տարվա փորձ ֆինանսական տնօրենի պաշտոնում ՀՀ առևտրային բանկերում



### ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Իրավաբանական տնօրեն, «Ամերիա» ընկերությունների խումբ

Ունի իրավաբանական պրակտիկայի ավելի քան 16 տարվա փորձ, մասնագիտանում է կորպորատիվ, բանկային և քաղաքացիական իրավունքի ոլորտում, ինչպես նաև արժեթղթերի բնագավառում:



### ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Ներքին աուդիտի դեպարտամենտի տնօրեն, Ամերիաբանկ

Ունի 22 տարվա փորձ հաշվապահական հաշվառման, աուդիտի և հարկային գործունեության ոլորտներում:



### ԳԱԳԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Կորպորատիվ բանկային գործառնությունների տնօրեն, Ամերիաբանկ

Ունի ավելի քան 7 տարվա փորձ կորպորատիվ բանկային գործառնությունների ոլորտում և կառավարման խորհրդատվության ավելի քան 15 տարվա փորձ մի շարք մասնավոր և միջազգային կազմակերպություններում:

# Մեր գործընկերները և տնօրենները

Երբ անուններն ամեն ինչ ասում են ...



### ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆ

Զարգացման գծով տնօրեն, «Ամերիա» ընկերությունների խումբ

Ունի ավելի քան 22 տարվա փորձ ուսումնասիրություններ և մշակումների ոլորտում մասնավոր և միջազգային կազմակերպություններում, գրքերի և ավելի քան 130 գիտական հոդվածների և այլ հրապարակումների հեղինակ է:



### ԱՐՄԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Մանրածախ բանկային գործառնությունների տնօրեն, Ամերիաբանկ

Ավելի քան 17 տարվա փորձ մանրածախ գործունեության և կառավարման ոլորտում ՀՀ առևտրային բանկերում



### ԱՌՆՈ ՄՈՍԻԿՅԱՆ

Ներդրումաբանկային գործառնությունների տնօրեն, Ամերիաբանկ

Ավելի քան 13 տարվա աշխատանքային փորձ ներդրումաբանկային խորհրդատվության, պորտֆելների և ռիսկերի կառավարման ոլորտներում մեծ քառյակի ընկերություններում և ներդրումային բանկերում



### ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆ

Առևտրային գործառնությունների տնօրեն, Ամերիաբանկ

Առևտրային գործառնություններ ի ավելի քան 17 տարվա փորձ Հայաստանի առևտրային բանկերում



### ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Տնօրեն տեխնոլոգիաների և գործառնությունների գծով, «Ամերիա» ընկերությունների խումբ

Ավելի քան 20 տարվա փորձ հեռահաղորդակցման ոլորտում ղեկավար պաշտոններում, ավելի քան 10 տարվա փորձ վաճառքի և հաճախորդների հետ հարաբերություններ ի ոլորտում ղեկավար պաշտոններում



### ՍԱՄՎԵԼ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Անվտանգության ծառայության ղեկավար, «Ամերիա» ընկերությունների խումբ

18 տարի պետական և առևտրային կազմակերպություններ անվտանգության համակարգում

# Մեր թիմը՝ ով ենք մենք

Ավելի քան 600՝ իրենց գործին նվիրված մասնագետներ



## ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԴԻՐՔԸ

### ՀՀ բանկային համակարգի առաջատարն ըստ 2016թ. չորրորդ եռամսյակի արդյունքների



- 1-նն ըստ ակտիվների
- 1-նն ըստ շահույթի
- 1-նն ըստ պարտավորությունների
- 1-նն ըստ վարկային պորտֆելի
- 1-նն ըստ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների
- 1-նն ըստ սեփական կապիտալի

# 2016 թ. չորրորդ եռամսյակի հիմնական ձեռքբերումները Համառոտ ակնարկ

- Financial Times հեղինակավոր կազմակերպության The Banker ամսագրի կողմից չորրորդ անգամ* արժանացել է Հայաստանի 2016թ. ,Տարվա լավագույն բանկե մրցանակին
- 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր է կնքել ,Պրոպարկոե ընկերության հետ
- 10 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի վարկային պայմանագիր է կնքել ՎԶԵԲ-ի հետ ,Կանայք բիզնեսումե ծրագրի շրջանակներում






European Bank
for Reconstruction and Development

* Տարվա լավագույն բանկ 2010, 2013, 2015 և 2016թթ.

# ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

- Մեր տնօրենների խորհրդին է միացել նոր անկախ անդամ:



## Պիեր Գյուրջյան

Պ. Գյուրջյանը Բելգիայի խոշորագույն համալսարաններից մեկի՝ Բրյուսելի ազատ համալսարանի տնօրենների խորհրդի նախագահն է: Նախքան RVVZ հիմնադրամին անդամակցելը Պ. Գյուրջյանը 27 տարի աշխատել է ,ՄկՔինզի ընդ Քամփնիե ընկերությունում որպես ավագ գործընկեր: 2005-2012թթ. եղել է ընկերության լյուքսեմբուրգյան գրասենյակի ղեկավար գործընկերը, այնուհետև ստանձնել մարդկային կապիտալի կառավարման ծառայությունների ղեկավարումը Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանում:

Ներկայումս հանդիսանում է մի շարք համալսարանների և միջազգային կազմակերպությունների խորհուրդների անդամ:

- Տնօրենների խորհրդին կից ստեղծվել է 3 նոր կոմիտե:

Կոմիտեները խորհդատվություն են տրամադրում Խորհդին առանցքային բնագավառներում և աջակցում են Խորհրդին իր պարտականությունների կատարման հարցում:

Կոմիտեները կսկսեն գործել 2017թ. առաջին եռամսյակից:



# Հիմնական ուժեղ կողմերը

## Ապագան կառուցվում է այսօր

| ԱՌԱՋԱԴԵՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ | ՀՍԿԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԱՃՈՂ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ | ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ԱՆՁՆԱԿԱԶՄ |
|---|---|---|---|
| Աննախադեպ ներդրումներ SS-ում և տեխնոլոգիական նորամուծություններ | Մանրածախ, կորպորատիվ և ներդրումաբանկային ծառայությունների լայն ընտրանի | Ռիսկերի կառավարման բարձր որակ | Ղեկավարների արհեստավարժ թիմ, որոնցից շատերը կրթություն են ստացել առաջատար արևմտյան համալսարաններում |
| Հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման (CRM) ավտոմատացված համակարգ | Ֆինանսավորման լայն հնարավորություններ ընձեռող մեծ կապիտալ | ISO 9001:2015 որակի կառավարման միջազգային չափանիշներին համապատասխանության վկայական՝ տրված TÜV Rheinland գերմանական ընկերության կողմից | Անձնակազմի շարունակական վերապատրաստում և ուսուցում |
| BankWorld հեռակառավարման բազմաֆունկցիոնալ համակարգ | Կայուն համագործակցություն հետազոտական ընկերությունների և անկախ խորհրդատուների հետ | Կորպորատիվ կառավարման լավագույն փորձի կիրառումը | Մեծ փորձ պետական և արտադրական ավելի քան 30 ոլորտներում |

# Մատուցվող ծառայությունները

## Հատուկ մշակված անհատական բանկային և խորհրդատվական ծառայություններ

| ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՄԱՆՐԱԾԱԽ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՆԵՐԴՐՈՒՄԱԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|
| Վարկավորում | Սպառողական վարկավորում | Միաձուլումներ և ձեռքբերումներ | Իրավաբանական ծառայություններ |
| Առևտրի ֆինանսավորում | Հիփոթեքային վարկավորում | Կորպորատիվ ֆինանսներ | Գործարար խորհրդատվություն |
| Ֆինանսական վարձակալություն | Ավտովարկեր | Պարտքային կապիտալի շուկաներ | Ֆինանսական խորհրդատվություն |
| Ֆակտորինգ | Վարկային քարտեր (Visa, MC, ArCa) | Բաժնային կապիտալի շուկաներ | Ուղիղ և որակի երաշխավորում |
| Նախագծերի ֆինանսավորում | Ավանդներ | IPO խորհրդատվություն, | Հաշվապահական և հարկային հաշվառում |
| Աշխատավարձային նախագծեր | Մետաղական հաշիվներ | Բրոքերային գործառնություններ | Խորհրդատվություն մարդկային ռեսուրսների ոլորտում |
| Ավանդներ | Ներդրումային վարկեր | Ներդրումային խորհրդատվություն | Նախագծերի կառավարում |

# «Ամերիա» ընկերությունների խմբի ներկայացուցչությունն ԱՄՆ-ում

Մենք ձգտում ենք դառնալ հայկական արմատներով առաջին միջազգային ֆինանսական խումբը:

- ՀՀ առաջատար ֆինանսախորհրդատվական խմբի աննախադեպ ներկայություն ԱՄՆ-ում
- «Ամերիա» ընկերությունների խմբի պրոդուկտների և ծառայությունների առաջխաղացում ԱՄՆ-ի հայկական Սփյուռքում
- «Ամերիա Գրուփ Ինքէ-ը տեղակայված է Գլենդելի (Քալիֆորնիա) գործարար կենտրոնում՝ Բրենդ Բուլվարում, իսկ մասնագետների պրոֆեսիոնալ թիմը միշտ պատրաստ է տրամադրել բարձրակարգ ներդրումային, կառավարչական, իրավաբանական և ցանկացած այլ տեսակի խորհրդատվություն:
- Արդեն իսկ բարեհաջող կերպով իրականացվել են մի շարք ներդրումային և խորհրդատվական նախագծեր:
- 2011թ. սեպտեմբերին կայացած բացման պաշտոնական արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Լոս Անջելեսի քաղաքապետը և այլ պատվավոր հյուրեր Լոս Անջելեսից և Հայաստանից:








# Պարգևներ և մրցանակներ

Շարունակական ճանաչում և գնահատանք ամենահեղինակավոր միջազգային հաստատություններից

THE BANKER՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ 2016, 2015, 2013, 2010

Euromoney-ի ,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ 2011Է ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2016, 2014, 2012, 2011

GLOBAL FINANCE՝ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ 2016, 2015, 2014, 2013, 2012, ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ 2015, 2014, ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒ 2015, 2014, 2013, ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹ ՓՈԽԱՆԱԿՈՂ ԲԱՆԿ 2016, 2015, 2014, 2013, 2012, ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿ 2016

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ 2013, 2012 ԵՎ 2010ԹԹ. ԳԵՐԱԶԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑԱՆԱԿ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՄՐՑԱՆԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆԹԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՎԶԵԲ՝ ,ՏԱՐՎԱ ԳՈՐԾԱՐՔ 2013Է ՄՐՑԱՆԱԿ, ՄՖԿ՝ GTFP ՄՐՑԱՆԱԿ 2014, 2012, 2010 ԱՄԵՆԱԱԿՏԻՎ ԹՈՂԱՐԿՈՂ ԲԱՆԿ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԿԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (GTFP) ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹՈՂԱՐԿՈՂ ԲԱՆԿ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 2012

# Համագործակցություն միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ

Համագործակցություն ամենահեղինակավոր ֆինանսական հաստատությունների հետ

- Առևտրի ֆինանսավորում
- Էներգաարդյունավետություն
- ՓՄՁ
- Գյուղատնտեսություն

# Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Մեր գործունեության հիմքում են ավնվությունը, փոխվստահությունը և էթիկայի սկզբունքները: Դրանք են մեր ուղենիշը մեր բոլոր հաճախորդների, աշխատակիցների, բաժնետերերի և գործընկերների հետ փոխհարաբերություններում:



## Երեխաների առողջություն

Յուրաքանչյուր տարի դրամական միջոցների հատկացում ծանր հիվանդություններով տառապող երեխաների բուժման համար: 2016 թ-ին Ամերիաբանկն ինտենսիվ թերապիայի ևս մեկ Hamilton C1 օդափոխիչ նվիրաբերեց ,Սուրբ Աստվածամայրէ բժշկական կենտրոնին (Հայաստանի առաջատար մանկական բուժհաստատություններից մեկը): Ֆինանսական օգնություն է տրամադրվել ծանր հիվանդություններով տառապող 12 երեխայի:






## Առողջ ապրելակերպ և շրջակա միջավայր

Առողջ ապրելակերպի խրախուսում՝ վազքի մարաթոնների հովանավորում, հեծանիվների կայանատեղերի ստեղծում, կանաչապատման նախաձեռնություններ





## Դրամաշնորհներ երիտասարդ ուսուցիչներին

Աջակցություն ,Դասավանդի՛ր, Հայաստանէ ՀԿ-ին, որի առաքելությունն է բարելավել կրթության հասանելիությունը Հայաստանի բոլոր երեխաների համար՝ ներգրավելով և վերապատրաստելով բացառիկ անհատների Հայաստանի սոցիալապես անապահով համայնքներից և ամբողջ հայկական Սփյուռքից:




## Կրթություն

Կրթաթոշակներ լավ առաջադիմություն ցուցաբերող օժտված երեխաներին՝ Դիլիջանի միջազգային դպրոցում սովորելու համար

## ԿՍՊ ԿՈՄԻՏԵ

2016 թ-ի վերջում Ամերիաբանկում ստեղծվեց ԿՍՊ կոմիտե, որը բաղկացած է սոցիալական միջոցառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերող աշխատակիցներից: ԿՍՊ կոմիտեի նպատակն է բարձրացնել ԿՍՊ հետ կապված որոշումների կայացման թափանցիկությունը, ավելի մեծ թվով աշխատակիցների ներգրավել ԿՍՊ միջոցառումների իրականացման գործընթացում և բարելավել Ամերիաբանկի ԿՍՊ շրջանակներում ծրագրերի ընտրության, իրականացման և մոնիթորինգի գործընթացները:

«Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

**Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ**

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

Հաշվեկշիռ

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# Հայաստան՝ թվեր և ցուցանիշներ

## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

**Տնտեսական ազատության ինդեքս 2016**

54-րդը 178-ից (չափավոր ազատ)

**Ձեռներեցությամբ զբաղվելու դյուրինությունը (Doing Business 2017)**

38-րդը 190-ից

**Մարդկային զարգացման ինդեքս 2015**

85-րդը 188-ից

- Ազգային արժույթը՝ հայկական դրամ
- Բնակչությունը՝ 2,987 հազ. (2017.01 01)
- ՀՆԱ՝ 10,5 մլրդ (2015, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)
- Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ 3504 մլրդ (2015, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)



**Մուդիսի վարկանիշ (մարտ 2016)**

B1 (կայուն)

**Ֆիտչի վարկանիշ (հունվար 2017)**

B+ (կայուն)

**Մրցունակության ինդեքս 2016-2017**

79-րդը 138-ից

# Հայաստան՝ թվեր և ցուցանիշներ




























## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Չնայած այն փաստին, որ վերջին 12 ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը կազմել է 0.5%, իսկ վերջին 9 ամիսներին ՀՆԱ-ի աճը՝ մոտ 0.4%, 2017թ. ՀՆԱ աճի կանխատեսումները զգալիորեն բարձր են: Ըստ ՄԱՀ-ի վերջին կանխատեսումների այն կկազմի 3.4%, ըստ ՎԶԵԲ-ի՝ 2%, իսկ ըստ կառավարության՝ 3.2%:

- ՀՆԱ-ի աճը դանդաղել է գյուղատնտեսական արտադրության ծավալների՝ 5 տարվա տպավորիչ աճից հետո գրանցված կրճատման արդյունքում, մինչդեռ արդյունաբերության, լեռնահանքային արդյունաբերության և ծառայությունների մատուցման ոլորտներում աճ է գրանցվել:

- Չնայած փոխարժեքի չնչին և մասնավոր տրանսֆերտների զգալի նվազմանը՝ միջազգային պահուստները զգալիորեն աճել են:

- Արտահանման կայուն տարեկան աճի արդյունքում առևտրային հաշվեկշիռը զգալիորեն բարելավվել է:

*Փոխանցումները ներառում են ֆիզիկական անձանց՝ բանկերի միջոցով ստացվող ընդհանուր առևտրային և մասնավոր փոխանցումները:

,Ամերիաէ ընկերությունների խումբ` համառոտ ակնարկ

Հայաստան` մակրոտնտեսական ցուցանիշներ

**ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները**

Հաշվեկշիռ

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները































## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Բանկային համակարգը հաղթահարել է 2014-2015թթ. ճգնաժամը գրանցելով ակտիվների, վարկերի և ավանդների կրկնակի աճ:
- Ամերիաբանկի զուտ շահույթն աճել է 29%-ով, մինչդեռ բանկային համակարգի ընդհանուր զուտ շահույթը նվազել է 12%-ով:
- Ամերիաբանկի կապիտալի եկամտաբերությունը 12 ամիսների ընթացքում կազմել է 10.2%, ինչը 7.5 տոկոսային կետով բարձր է միջին շուկայական ցուցանիշից:
- 2015 և 2016թթ. ընթացքում 13 բանկ ներգրավվեց նոր կապիտալ՝ ավելի քան 158 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով. ակնկալում ենք, որ դա կնպաստի տնտեսության զգալի աճին:

Բանկի չաշխատող վարկերը (1+ օր ժամկետանց) նվազել են 3.9 տոկոսային կետով՝ կազմելով 3.3%: Չաշխատող վարկերի միջին շուկայական ցուցանիշը նվազել է 2.4 տոկոսային կետով՝ կազմելով 7.7%:

Ամերիաբանկն 1-ինն է հիմնական մրցակիցների շարքում ծախսերի և եկամուտների հարաբերակցությամբ, որը զգալիորեն ցածր է միջին շուկայականից:

# Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում

ԱԿՏԻՎՆԵՐ մլն ՀՀ դրամ

| #2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | **Ամերիաբանկ** | **718,281** |
| 2 | 2 | Արդշինբանկ | 504,743 |
| 3 | 4 | Հայբիզնեսբանկ | 404,413 |
| 4 | 6 | ԱԿԲԱ | 283,825 |
| 5 | 14 | Անելիք Բանկ | 283,472 |




ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ մլն ՀՀ դրամ

| #2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | **Ամերիաբանկ** | **505,601** |
| 2 | 2 | Արդշինբանկ | 337,689 |
| 3 | 3 | Հայբիզնեսբանկ | 268,469 |
| 4 | 12 | Անելիք Բանկ | 217,566 |
| 5 | 5 | ԱԿԲԱ | 174,938 |




ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ մլն ՀՀ դրամ

| #2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | **Ամերիաբանկ** | **653,872** |
| 2 | 2 | Արդշինբանկ | 450,738 |
| 3 | 3 | Հայբիզնեսբանկ | 367,618 |
| 4 | 13 | Անելիք Բանկ | 241,858 |
| 5 | 6 | ԱԿԲԱ | 226,995 |




ՊԱՐՏ. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ մլն ՀՀ դրամ

| #2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | **Ամերիաբանկ** | **467,876** |
| 2 | 3 | Հայբիզնեսբանկ | 261,334 |
| 3 | 2 | Արդշինբանկ | 250,831 |
| 4 | 14 | Անելիք Բանկ | 167,582 |
| 5 | 4 | ՎՏԲ Բանկ Հայաստան | 161,316 |




ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ մլն ՀՀ դրամ

| #2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | **Ամերիաբանկ** | **64,409** |
| 2 | 2 | ԱԿԲԱ | 56,830 |
| 3 | 4 | Արդշինբանկ | 54,005 |
| 4 | 3 | HSBC | 47,610 |
| 5 | 6 | Ինեկոբանկ | 43,804 |




ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ մլն ՀՀ դրամ

| #2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐԸ |
|---|---|---|---|
| 1 | 2 | **Ամերիաբանկ** | **6,218** |
| 2 | 3 | Ինեկոբանկ | 5,496 |
| 3 | 4 | Արդշինբանկ | 4,560 |
| 4 | 5 | Արմսվիսբանկ | 3,254 |
| 5 | 21 | Արցախբանկ | 2,632 |




**Մասնաբաժինը եկամտաբեր բանկերի շահույթում
**Մասնաբաժինն ընդհանուր շահույթում (ներառյալ վնասը) կազմում է 38.8%:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Ամենամեծ բանկը Հայաստանում Բացարձակ առաջատար ըստ ակտիվների, վարկերի, ավանդների և զուտ շահույթի:
- Կայուն աճ վերջին 5 տարիների ընթացքում. ակտիվների միջին տարեկան աճը վերջին 5 տարիների ընթացքում կազմել է 29%, որի շնորհիվ բանկի շուկայական մասնաբաժինը 9.7%-ից ավելացել է մինչև 17.3%:
- Զգալիորեն ավելացել են նաև վարկային պորտֆելը և հաճախորդների նկատմամբ պարտավորությունները, որոնց միջին տարեկան աճը վերջին 5 տարում կազմել է համապատասխանաբար 30% և 39%: Արդյունքում շուկայի մասնաբաժինը կազմել է համապատասխանաբար 19.5% և 19.7%:
- Շահույթի մասնաբաժինն ավելացել է 2.3 տոկոսային կետով՝ կազմելով եկամտաբեր բանկերի ընդհանուր շահույթի 18.6%-ը:

1-ին Աշխատանք
ակտիվների
վարկերի
հաճախորդների ավանդների
կապիտալի
զուտ շահույթի

,Ամերիաե ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

**Հաշվեկշիռ**

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# Ակտիվներ, պարտավորություններ և կապիտալ

## Ակտիվներ




## Ակտիվների կառուցվածքը




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Ակտիվների 39% աճը զուգակցվել է ընդհանուր վարկային պարտավորությունների 43% աճով:
- Ակտիվների և պարտավորությունների միջին տարեկան աճը վերջին 5 տարում կազմել է համապատասխանաբար **29%** և **31%**՝ գերազանցելով շուկայական ցուցանիշը:
- Հաշվեկշռի դիվերսիֆիկացված կառուցվածք՝ տոկոսաբեր ակտիվները կազմում են ընդհանուր ակտիվների 78%, իսկ պարտավորությունները հաճախորդների նկատմամբ՝ ընդհանուր պարտավորությունների 75%-ը:

## Պարտավորություններ և կապիտալ




## Պարտավորությունների կառուցվածքը




**718 մլրդ**
ՀՀ դրամի ակտիվներ

**64 մլրդ**
ՀՀ դրամի կապիտալ

# Վարկային պորտֆել

## Վարկային պորտֆել




## Վարկային պորտֆելի կառուցվածքը




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Ամենամեծ վարկային պորտֆելը ՀՀ բանկային համակարգում: Վերջին 5 տարիների ընթացքում միջին տարեկան աճը կազմել է 30%:
- Վարկային պորտֆելի 63.4% աճը գերազանցել է միջին շուկայական ցուցանիշը (20.5%):
- Բանկը պահպանում է պորտֆելի բացառիկ դիվերսիֆիկացումը՝ հավասարապես ներգրավելով տնտեսության բոլոր ճյուղերը:

## Վարկային պորտֆելի կենտրոնացումը




*ՀՀ ԿԲ Ն3.1՝ մեկ փոխառուի ռիսկը չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի **20%**-ը:
*ՀՀ ԿԲ Ն3.2՝ խոշոր փոխառուների ռիսկը չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի **500%-ը**: Խոշոր է համարվում այն փոխառուն, ում վարկային պարտավորությունների հանրագումարը գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 5%-ը:

## Վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի




**508 մլրդ ՀՀ դրամի վարկեր**

# Կորպորատիվ վարկեր և առևտրի ֆինանսավորում

## Կորպորատիվ վարկեր




## Կորպորատիվ վարկերի կառուցվածքն ըստ արժույթի




## Առևտրի ֆինանսավորում




## Առևտրի ֆինանսավորման կառուցվածքն ըստ արժույթի




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Խոշոր կորպորատիվ և ՓՄՁ վարկային պորտֆելները աննախադեպ աճ են գրանցել: Այն կազմել է **համապատասխանաբար 77% և 38%:**
- Չնայած՝ խոշոր վարկային պորտֆելը ՓՄՁ պորտֆելի համեմատ ավելի մեծ աճ է գրանցել՝ բանկը, հավատարիմ մնալով իր ռազմավարությանը, շարունակում է ընդլայնել ՓՄՁ վարկային պորտֆելը:
- Հայկական դրամը ամենակայուն ազգային արժույթներից մեկն էր տարածաշրջանում մյուս արժույթների արժեզրկման ֆոնին, որը հանգեցրեց արտաքին առևտրի ծավալների նվազմանը:
- Արդյունքում առևտրի ֆինանսավորման շուկան կտրուկ անկում ապրեց, սակայն բանկին հաջողվեց պահպանել առաջատարի իր դիրքերը: Բանկի առևտրի ֆինանսավորման գործիքների պորտֆելն ամենամեծերից մեկն է:

**448 մլրդ**
ՀՀդրամի կորպորատիվ վարկեր

**14 մլրդ**
ՀՀ դրամի առևտրի ֆինանսավորում

# Մանրածախ վարկեր

## Մանրածախ վարկեր




## Մանրածախ վարկերի կառուցվածքն ըստ արժույթի




## Մանրածախ բիզնես վարկեր




## Սպառողական վարկեր




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- 2016թ. 2-րդ եռամսյակից մեկնարկեց ակտիվ վարկային արշավ, որի շնորհիվ ծավալն աճել է 26%-ով տարեսկզբի համեմատությամբ:
- Գրանցվեց մանրածախ ՓՄՁ վարկերի **աննախադեպ 66%-անոց աճ:**
- Մանրածախ վարկավորման ծավալը գերազանցել է նախկինում գրանցված ամենաբարձր ցուցանիշը, որն արձանագրվել էր 2014թ.:
- Այս հատվածն ունի զարգացման հսկայական ներուժ՝ շնորհիվ ենթակառուցվածքային մեծածավալ ներդրումների (բանկոմատներ, մասնաճյուղեր, հեռակառավարվող համակարգեր):

**60 մլրդ**

դրամի մանրածախ վարկեր

**13.2 մլրդ**

ՀՀ դրամի ՓՄՁ վարկեր

# Վարկային պորտֆելի որակը

## Չաշխատող վարկեր (90+օր ժամկետանց)




## Ծածկույթի գործակից (90+օր ժամկետանց




## Վարկային ռիսկի արժեքը




*Վարկային ռիսկի եռամսյակային արժեքը ներկայացված է տարեկան կտրվածքով:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Վարկային ճգնաժամի ամենածանր շրջանը հաղթահարված է. բանկի չաշխատող վարկերը (90+ օր ժամկետանց) նվազել են մինչև 2.9%.
- Բոլոր խոշոր չաշխատող վարկերն ապահոված են հիմնական միջոցների գրավով՝ մինչև 80% վարկ/գրավ հարաբերակցությամբ:
- Ծածկույթի գործակիցը բարելավվել է՝ հասնելով 58%-ի:
- Ռիսկերի խիստ վերահսկողության արդյունքում վարկային ռիսկի արժեքը կրճատվել է մեկ տոկոսային կետով՝ կազմելով 1.1%:

**2.9%**

Չախշատող վարկեր (90+ օր ժամկետանց)

**1.1%**

Վարկային ռիսկի արժեքը

# Ավանդներ և պարտատոմսեր

## Ավանդներ և պարտատոմսեր




## Ավանդների կառուցվածքն ըստ արժույթի




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Ավանդների և պարտատոմսերի միջին տարեկան աճը 5 տարվա ընթացքում կազմել է 39%:
- 2016 թ-ին բանկը թողարկել և հաջողությամբ տեղաբաշխել է 8.4 մլրդ ՀՀ դրամի ընդհանուր ծավալով դոլարային և դրամային պարտատոմսեր, որոնց հիմնական մասը տեղաբաշխվել է մանրածախ հաճախորդների շրջանում: Թողարկված դոլարային պարտատոմսերի եկամտաբերությունն էապես նվազել է տերեվերջին՝ վկայելով վարկարժանության աճի մասին:
- Բանկը համարվում է պարտատոմսերի ներքին շուկայի առաջատարը՝ իր 53% մասնաբաժնով:
- Չնայած 2016թ. տոկոսադրույքի շարունակական նվազմանը՝ մանրածախ ժամկետային ավանդների ծավալն ավելացել է:

**478 մլրդ**
ՀՀ դրամի ավանդներ և պարտատոմսեր

**306 մլրդ**
ՀՀ դրամի կորպորատիվ ավանդներ և պարտատոմսեր

**171 մլրդ**
ՀՀ դրամի մանրածախ ավանդներ և պարտատոմսեր

## Կորպորատիվ ավանդներ և պարտատոմսեր




## Մանրածախ ավանդներ և պարտատոմսեր



# Միջազգային ֆինանսական հաստատությունների և կառավարության տված վարկեր, ստորադաս փոխառություններ և կապիտալ

## Ներգրավված միջոցներ




## Ստորադաս փոխառություններ




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Տարածաշրջանում բոլոր խոշոր միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցող ամենաակտիվ բանկը: Բանկի հանդեպ վստահության աճի շնորհիվ բանկի հետ համագործակցող միջազգային ֆինանսական հաստատությունների թիվը տարեցտարի ավելանում է: Սա թույլ է տալիս բանկին պարտավորությունների մի մասը փոխարինել ավելի էժան և երկարաժամկետ ֆինանսավորմամբ:
- Խոշորագույն բանկը Հայաստանում ըստ կապիտալի:
- ,ESPS Հոլդինգ Լիմիթեդ ընկերությունն ստեղծվել է աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի շրջանակներում Ամերիաբանկի ղեկավարների կողմից ձեռքբերված բաժնետոմսերի պահպանման համար:

## Կապիտալ




## Բաժնետիրական կապիտալ




**128 մլրդ**
ՀՀ դրամի ներգրավված միջոցներ

**41 մլրդ**
ՀՀ դրամի ստորադաս փոխառություններ

**64 մլրդ**
ՀՀ դրամի կապիտալ

«Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

Հաշվեկշիռ

**Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն**

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# Տոկոսային եկամուտ

## Տոկոսային եկամուտ




## Տոկոսային եկամտի կառուցվածքը




## Տոկոսային ծախսերի կառուցվածքը




## Զուտ տոկոսային մարժա




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

